ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ*

ՆԱՐԵԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի ավագ գիտնական-վերլուծաբան,
ՀՀ ԳԱԱ փիլիսփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
nkgrigoryan@gmail.com

Հետազոտության նպատակն է ներկայացնել կոնսոցիատիվիզմի հիմնական տեսագործնական մոտեցումները և արդյունքների միջոցով ցույց տալու աշխատանքի գիտակիրառական արդի նշանակությունը:

Նպատակից բխող խնդիրն է՝ հստակեցնել կոնսոցիատիվ ժողովրդավարության եզրույթը և տարբեր լեզուներում դրա համարժեք գործածությունը: Մանրամասն նկարագրվում են թե՛ կոնֆեսիոնալիզմի, թե՛ կորպորատիզմի հիմնական հայեցակարգային բնութագրիչները: Հատուկ նշվում է պետությունների տարածքային կազմակերպման ունիտար և դաշնային ձևերում կոնսոցիատիվիզմի կիրառելիության հնարավորությունների և առանձնահատկությունների մասին: Խնդիր է դրված նաև անդրադառնալու համաշխարհային քաղաքական գործընթացներում կոսնոցիատիվիզմի խառը (հիբրիդ) դրսևորումներին և կիսակոնսոցիատիվ պետությունների օրինակներին:

Հետազոտության իրականացման արդյունքում կիրառվել են ինչպես համակարգային, այնպես էլ համեմատական վերլուծության մեթոդները:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսությունը տեղայնացման արդյունքում կիրառելի է ինչպես միատարր, այնպես էլ դաշնային պետություններում: Կարծում ենք՝ հոդվածը կարող է նաև կիրառական նշանակություն ունենալ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման գործընթացում:

Հիմնաբառեր՝ *կոնսոցիատիվ ժողովրդավարություն, ունիտար, դաշնային, կոնֆեսիոնալիզմ, կորպորատիզմ, կիսակոնսոցիատիվիզմ, ժողովրդավարության մոդել, բազմակազմ հասարակություն, քննադատություն:*

Մասնագիտական քաղաքագիտական գրականության մեջ կան ժողովրդավարության մոդելների վերաբերյալ տարաբնույթ սահմանումներ և առանձնահատկություններ: Այս առումով կարևոր է նշել, որ ժողովրդավարությունն իր տեսակով լինում է ուղիղ (direct), ներկայացուցչական (representative) և կիսաուղիղ (hybrid)[48] : Մոդելների մասով տարբեր տեսաբան-քաղաքագետներ ներկայացնում են ժողովրդավարության լիբերալ, սոցիալ, մասնակցային, դելեգատիվ, էլիտար, ինկլյուզիվ, կոնսենսուսային և այլ ձևեր: Այս ամենից զատ, ժողովրդավարության յուրահատուկ

* Հոդվածը ներկայացվել է 27.01.2020թ., գրախոսվել՝ 18.02.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

[48] *Garret E.*, "The Promise and Perils of Hybrid Democracy" (PDF), University of Oklahoma Law School. Archived from the original (PDF) on 9 October, 2017. https://clhc.usc.edu/centres/cslp/assets/docs/cslp-wp-048.pdf /09.10.2018/.

մոդելային ձևակերպումներ է ներկայացնում Ա. Լեյփհարթը, որ մյուս մոդելներից զատ համամասնական վերլուծության ու հակադրության շրջանակներում անդրադառնում է վեստմինստերյան և կոնսոցիատիվ ժողովրդավարությունների երկու առանձին մոդելներին[49]: Վեստմինստերյան ժողովրդավարությունը (Մեծ Բրիտանիա, Նոր Զելանդիա և այլն) կենտրոնանում է միակուսակցական կառավարման օրենսդիր ու գործադիր իշխանության մարմիններում՝ կենտրոնական կառավարում, միատարրություն, ինքնիշխան խորհրդարան, մեծամասնական ընտրական համակարգ: Սակայն վեստմինստերյան ժողովրդավարության դեպքում այն աշխատում է հակադրության սկզբունքով, մասնավորապես մեծամասնության իշխանությունը հակադրելով փոքրամասնության իշխանությանը՝ նպաստում է, որպեսզի կողմերից մեկը հաղթանակ տանի մյուսների նկատմամբ և դրանով սրի հասարակական բնականոն զարգացման դրսևորումները: Ավելին՝ այս մոտեցումը խախտում է բնականոն հավասարակշռման սկզբունքը, մինչդեռ ժողովրդավարության գոյակցության գլխավոր նախապայմաններից է համարվում համակեցության ու հասարակության հավասարակշռության ապահովումը: Վեստմինստերյան մոդելի պայմաններում ժողովրդավարության մի շարք հիմնային սկզբունքներ դառնում են զուտ հռչակագրային բնույթի: Մասնավորապես մարդու իրավունքները, որոնք գաղափարախոսական և իրավական առումներով վերաարժևորված են, իրականում մեթոդական գործառնության մասով ի չիք են դառնում և ստորադասվում օլիգարխիկ կամ տիրապետող բռնապետությանը: Եվ այստեղ տեղին կլինի նշել, որ վեստմինստերյան ժողովրդավարության մոդելի պայմաններում իշխանության եկածները դեռևս ժողովրդավարական գործընթացների արդյունքներ չեն, այլ ավելի շատ քաղաքական գրավչության քողով պարուրված անձինք, որոնք կարող են շատ արագ ժողովրդավարական գործընթացներում բացասական բեկումներ մտցնել: Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելը կարելի է բնութագրել որպես վեստմինստերյան ժողովրդավարության մոդելին հակադիր մոդել, որտեղ կարևորվում են իշխանության բազմազանությունը, համամասնությունը, կոալիցիոն կառավարումը, փոքրամասնությունների (սեգմենտ, ստրատա) ներկայացվածությունը խորհրդարանում, հաշվեկշռված երկպալատ խորհրդարանի հնարավոր առկայությունը, բազմակուսակցական համակարգի առկայությունը, բազմակարծությունը և այլն:

Միաժամանակ տարբեր հասարակություններում միջսեգմենտային հարաբերություններում հաճախ են նկատվում մրցակցային գործընթացներ, որոնցում մեկ սեգմենտը փորձում է առավելության հասնել մյուսի նկատմամբ, թելադրել իր կենսակերպը և բոլոր հնարավոր միջոցներով ազդել որոշումների կայացման գործընթացի վրա: Սակայն սա չի նշանակում, որ սեգմենտների միջև հարաբերություններում պարտադիր է, որ դրանք պարբերաբար ուղեկցվեն հակամարտություններով կամ բախումներով: Հենց այս առումով էլ կարևորվում այս մոդելի ճկունությունը, որը կարգավորում է բոլորի միջև շահակենտրոն հարաբերությունները և, որպես ժողովրդավարական լուծում, փորձում գրեթե բոլոր հարցերին դիվանագիտական, հնարավորինս ապառազմական համատեղ լուծումներ տալ: Կարելի է ասել, որ կոնսոցիատիվ ժողովրդավարությունը դիտվում է որպես տարամետ շահերի արտահայտման և լավ կառավարման ժողովրդավարության մոդել, չնայած այն հանգամանքին, որ կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի դեպքում չի բացառվում միջսեգմենտային կոնֆլիկտածին իրավիճակների առկայությունը: Այս մոդելը կարող ենք նաև համարել դիվանագիտական, քանի որ մոդելի կիրառության նպատակը իրական ժողովրդավարության համատեքստում պետական լավ կառավարում

[49] *Lijphart A.*, Democracy in Plural Societies: A Comparative Exploration. New Haven, CT: Yale University Press, 1977, pp. 1-3.

իրականացնելն է, որն իրականացվում է բազմահենք շահերի արտահայտմամբ և իշխանության բաղդատմամբ:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ կոնսոցիատիվ համակարգը բազմակազմ հասարակության դրսևորում է, որտեղ իշխանության կիսմամբ, կողք կողքի գոյակցում են տարբեր էթնիկական, մշակութային և այլ սեգմենտներ, որոնց գլխավոր նպատակը համակեցությունն է, այլ ոչ թե մեկի կողմից իշխանության նվաճումը: Կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում կարևորվող բազմակազմ հասարակություն նշանակում է, որ մեկ հասարակության շրջանակներում գոյակցում են տարբեր սեգմենտային էթնիկական, մշակութային, կրոնական և այլ առանձնահատկություններով մարդկանց խմբեր: Ս. Հանթինգտոնը, Ջ. Ֆուրնիվալը և Բ. Ռեյլին նման հանրույթներին իրենց աշխատություններում անվանում են բազմակազմ (plural), ճաքած (torn), ճեղքված (cleft) կամ բաժանված (divided) հասարակություններ և կարծում են, որ բոլոր հատվածների կառավարումը հնարավոր է իրականացնել ոչ թե ազգային միասնության կամ համընդհանուր մշակութային արժեքաբանության ձեռքբերմամբ, այլ պետական կառավարման համակարգի արդյունավետ ընտրությամբ և համապատասխան մոդելների ու մեթոդների իրականացմամբ[50]: Կոնսոցիատիվիզմի տեսանկյունից Լեյփհարթը անդրադառնում է նաև տեսությունն ամբողջացնող չորս հիմնական սկզբունքներին՝ մեծ կոալիցիա, փոխադարձ վետո, համամասնության սկզբունք և սեգմենտների ինքնավարության սկզբունք: Սկզբունքների հարցում կարևորվում են ոչ միայն տեսական ու բովանդակային սահմանումները, այլև դրանց մեթոդական գործառնության և կոնկրետ պետությունների (տվյալ դեպքում ՀՀ օրինակով) համատեքստում մասնավորեցման, տեղայնացման հարցերը[51]:

Կոնսոցիատիվիզմի տեսության դրույթների և բովանդակային ընկալումների համատեքստում հաճախ հասկանում ենք նաև իշխանության կիսումը (power sharing), որի նպատակն է կայունության ապահովման հիմքով ժողովրդավարական վարչակարգի պահպանումը և բռնատիրության մերժումը[52]: Միաժամանակ, կոնսոցիատիվիզմի հետ հաճախ ասոցացվում են երկու կարևոր տեսագործնական ուղղություններ՝ կոնֆեսիոնալիզմը (confessionalism) և կորպորատիզմը (corporatism)[53]: Կոնֆեսիոնալիզմը այնպիսի կառավարման համակարգ է, երբ ըստ իրավունքի (de jure) միախառնված են կրոնն ու քաղաքականությունը (դավանականություն): Այդ համակարգի նպատակն է կրոնական համայնքների շրջանակներում իշխանության տարածումը և ղեկավարումը[54]: Կոնֆեսիոնալիզմը իրական հնարավորություն է ստեղծում կրոնական ու էթնիկական համայնքներում ստեղծելու ներդաշնակ գոյակցության պայմաններ[55]: Կոնֆեսիոնալ կառավարման համակարգի դրսևորումներ կան Լիբանանում, Նիդերլանդներում և Բոսնիա-Հերցեգովինայում, որտեղ հստակ նշմարվում են կրոնի ու քաղաքականության շաղկապման, ինչպես նաև

[50] *Huntington S.,* After Twenty Years: The Future of the Third Wave, Journal of Democracy 8(4), 1997, pp. 3-12.

[51] *Lijphart A.,* Constitutional Design for Divided Societies" (PDF). Journal of Democracy. 15 (2), 2004, pp.96-109.

[52] **Лейпхарт А.,** Демократия в многосоставных обществах. Сравнительное исследование. Пер. с англ., М., 1997, стр. 36.

[53] *Wiarda H .,* Corporatism and Comparative Politics: The Other Great Ism, 0765633671: M.E. Sharpe, 1996, pp. 22-23.

[54] *O'Leary B.,* The 1998 British-Irish Agreement: Power-sharing plus". Scottish Affairs. 26, 1999, pp.14-35.

[55] *Greif A.,* Cultural Beliefs and the Organization of Society: A Historical and Theoretical Reflection on Collectivist and Individualist Societies, The Journal of Political Economy 102(5), 1994, pp. 912-950.

սահմանադրական ձևակերպումների հետ կապված հարցերը[56]: Կորպորատիզմը ընդհանուր շահերի հենքով հասարակության կազմակերպման ձև է կորպորատիվ խմբերի գյուղատնտեսական, աշխատանքային, գիտական խոշոր միավորումների (scientific syndicate), ռազմական, մշակութային ոլորտների շրջանակներում: Այն ավելի շատ հարում է սոցիալ-դեմոկրատիայի տիրույթին, իսկ կորպորատիզմը (corporatism) կարող ենք սահմանել որպես սոցիալական կազմակերպման ձև, ըստ որի ամբողջանում և իրականացվում են մարդկանց բնական շահերը և սոցիալական գործառույթները (համախմբականություն):

Կոնսոցիատիվիզմի վերաբերյալ քննադատությունները հիմնականում կապված են դրա չորս հիմնական սկզբունքների հետ: Քննադատներից են Ռինուս վան Շենդելենը, Բերենդեն Օլիրին, Իեն Լյուսթիկը, Ջիովաննի Սարտորին և այլք:

Օրինակ՝ «մեծ կոալիցիայի» դեպքում նշվում է, որ որոշումների կայացման գործընթացը ավելի շատ է դանդաղում, ուստի քննադատները նշում են, որ ավելի հեշտ է կլինի փոքր կոալիցիայում խմբային շահերի ու գաղափարների արտահայտումը, քան մեծ կոալիցիայում, որը լուրջ անորոշություններ ու ռիսկեր է պարունակում:

Մյուս քննադատությունը կապված է «փոխադարձ վետոյի» հետ, ըստ որի՝ փոխադարձ վետոյի կիրառությունը կարող է որոշումների ընդունման գործընթացը ամբողջությամբ տապալել: Սա կարող է հանգեցնել անկայունությունների և հատվածականության ուժեղացման, որոնց դեմ պայքարը կոնսոցիատիվիզմի առանցնքն է:

«Համամասնության» սկզբունքի քննադատները կարծում են, որ պետական պաշտոնների համամասնական բաշխման հարցում հատվածներին պատկանելիությունն ավելի առաջնային կլինի, քան թեկնածուների անհատական ու մասնագիտական որակները, որոնք կխոչնդոտեն արդյունավետ կառավարման գործընթացին: Սակայն դա չի նշանակում, որ կոնկրետ խմբի ներկայացուցիչը չի կարող ունենալ համապատասխան որակներ, ուստի կարող ենք ասել, որ այդ մոտեցումն այնքան էլ հիմնավոր չէ:

Հաջորդ քննադատությունը կապված է «սեգմենտների ինքնավարության և դաշնության» սկզբունքի հետ: Մասնավորապես նշում են, որ բազմակազմ հասարակության հատվածների ինքնավարությունը բառացիորեն շատ թանկ արժե, պահանջում է պետական կառավարման ու վարչական ծառայությունների թվի աճ, մեծ կոալիցիայում յուրաքանչյուր հատվածի համար առանձին կառույցի ստեղծում: Ավելին, սեգմենտներին ինքնավարություն տալը նպաստում է բազմակազմ հասարակության անհամասեռության խորացմանը, և կոնսոցիատիվ ժողովրդավարությունը բազմակազմ հասարակությունը դարձնում է Է՛լ ավելի տարասեռ: Օրինակ՝ մի դեպքում կոնսոցիատիվիզմը օգնում է կանխելու կոնֆլիկտները, մյուս կողմից՝ ամրապնդում է էթնիկական ինքնությունը, էթնոքաղաքականությանը, որը, ի վերջո, հանգեցնում է էթնոկրատիայի:

Այսօր կարելի է հստակ առանձնացնել կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի խոցելի ու դրական կողմերը, բայց ամեն դեպքում կոնսոցիատիվիզմի կիրառությունը, ի տարբերություն այլ մոդելների, նպատակաուղղված է ոչ թե միակողմանի առավելությունների որոնմանը, այլ բոլորի ներգրավմամբ իշխանության կիսման և համապատասխան քաղաքական կամքի դրսևորման միջոցով Է՛լ ավելի զարգացնելու ժողովրդավարությունը՝ որպես քաղաքական վարչակարգ:

[56] *Harb I.*, Lebanon's Confessionalism: Problems and Prospects, United States Institute of Peace. https://www.usip.org/resources/lebanons-confessionalism-problems-and-prospects /31.08.18/.

THEORETICAL AND PRACTICAL BASIS OF CONSOCIATIONAL DEMOCRACY

NAREK GRIGORYAN
Senior Research Analyst at National Defense Research University of the MOD, RA,
PhD Student, The Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA,
Yerevan, Republic of Armenia

The purpose of the study is to present the main theoretical and practical research approaches of consociationalism, as well as to show the scientific and practical significance of the work in our days through research.

The purpose of the assignments is to clarify the concept of consociational democracy and its proper use in different languages. The basic conceptual characteristics of both confessionalism and corporatism are described in detail. Particularly the opportunities and features of consociationalism in unitary and federal forms of the territorial organization of states are mentioned. The task also consists of considering mixed (hybrid) manifestations of consociationalism in world political processes and examples of semi-consociational states.

During the study, both systematic and comparative analysis methods were used.

The study concludes that the theory of consociational democracy as a result of localization is applicable to both unitary and federal states. We believe that this topic can also be of practical importance in the process of public administration of the Republic of Armenia.

Key words: *consociational democracy, unitarian, federal, confessionalism, corporatism, hybrid consociationalism, model of democracy, plural society, criticism.*

ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ОСНОВЫ КОНСОЦИАТИВНОЙ ДЕМОКРАТИИ

НАРЕК ГРИГОРЯН
Старший научный аналитик
Национального оборонно-исследовательского университета МО РА,
аспирант Института философии, социологии и права НАН РА,
г. Ереван, Республика Армения

Целью исследования является представление основных теоретико-практических исследовательских подходов консоциативизма, а также научной и практической значимости работы в наши дни.

Задача – уточнить термин консоциативной демократии и его эквивалентное применение в разных языках. Подробно описываются основные концептуальные характеристики конфенсионализма и корпоратизма. Особо отмечаются возможности и особенности применения консоциативизма в унитарных и федеративных формах

территориальной организации государств. Задачей является также рассмотрение смешанных (гибридных) проявлений консоциативизма в мировых политических процессах и примеров полуконсоциативных государств.

В результате осуществления исследования были применены методы как системного, так и сравнительного анализов.

По итогам исследования пришли к выводу, что в результате локализации теория консоциативной демократии применима как к однородным, так и к федеративным государствам. Считаем, что данная тема может иметь практическое значение в процессе государственного управления Республики Армении.

Ключевые слова: *консоциативная демократия, унитарный, федеральный, конфессионализм, корпоратизм, гибридный консоциативизм, модель демократии, многосоставное общество, критика.*